ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« » «_____» 2024թ. **N ----- -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 50-Ն որոշման հավելվածի 3-րդ կետը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան համայնքի սեփականություն համարվող գույքը (երաժշտական գործիքներ), ընդհանուր՝ 67509.0 հազ. (վաթսունյոթ միլիոն հինգ հարյուր ինը հազար) ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով, սեփականության իրավունքով անհատույց հանձնել (նվիրել) «Երևանի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ին՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Երևան քաղաքի ավագանու
2024 թվականի _____ _____ի
N _____-Ա որոշման

ՑԱՆԿ

«ԵՐԵՎԱՆԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՆՁՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ

Երաժշտական գործիքի անվանումը	*մակնիշը*	*Արժեքը (ՀՀ դրամ)*	*քանակը*	*գինը (ՀՀ դրամ)*
Ջութակ 3/4	Hofner H11-V-O 3/4	505000	2	1010000
Ջութակ 4/4	Hofner H11-V-O 4/4	505000	2	1010000
Ալտ	Hofner H11-V-A-O	575000	2	1150000
Թավջութակ 3/4	Hofner H4/2E-C-O-3/4	1825000	2	3650000
Թավջութակ 4/4	Hofner H4/2E-C-O-4/4	1830000	2	3660000
Ֆլեյտա	Miyazawa PB-402 REH	1935000	1	1935000
Գալարափող	Hans Hoyer G10-L1	3670000	4	14680000
Ֆագոտ	Schreiber S91	14285000	2	28570000
Հոբոյ	YAMAHA YOB-831	5922000	2	11844000
Ընդամենը			**19**	**67509000**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունումը պայմանավորված է Երևան համայնքի հաշվեկշռում առկա երաժշտական գործիքները (թվով 19 երաժշտական գործիք) Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ ստեղծված «Երևան» պատանեկան սիմֆոնիկ նվագախմբի գործունեության ընթացքում (փորձեր և համերգներ) օգտագործելու գործընթացը կազմակերպելու անհրաժեշտությամբ:

Որոշման ընդունման արդյունքում Երևանի ենթակայությամբ գործող երաժշտական և արվեստի դպրոցներից կազմավորված նվագախմբի պատանի երաժիշտներին կհանձնվեն աշխարհում գործող բարձրակարգ սիմֆոնիկ նվագախմբերի կողմից գործածվող թանկարժեք երաժշտական գործիքներ, ինչը կարևոր դերակատարություն է ունենալու ինչպես նվագախմբի կատարողական որակի բարձրացման, նոր և բարձրորակ երաժշտական գործիքներով համերգային ծրագրեր իրականացնելու, այնպես էլ, ընդհանուր առմամբ, Հայաստանում դասական երաժշտարվեստի զարգացման, մշակութային կրթության գրավչության մեծացման, արտադպրոցական ուսուցման ոլորտի շահառուների սոցիալական բեռի թեթևացման հետ կապված գործընթացներում: Որոշման համաձայն՝ Երևան համայնքի հաշվեկշռում առկա երաժշտական գործիքները սեփականության իրավունքով անհատույց հանձնվում են «Երևանի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, որը կազմակերպելու է նվիրատվությամբ ստացված գույքը «Երևան» պատանեկան սիմֆոնիկ նվագախմբի երաժիշտներին տրամադրելու գործընթացը (նվագախմբի փորձերի և համերգների իրականացման ընթացքում օգտագործելու նպատակով):

«Երևանի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոց» հանձվող գույքը ձեռք է բերվել «Գնումների մասին» օրենքով սահմանված ընթացակարգով, մրցութային կարգով, Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի «Գույքի և երաժշտական գործիքների ձեռքբերում» ծրագրի շրջանակներում: Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել 9 անուն 19 երաժշտական գործիք՝ 67509.0 հազ. (վաթսունյոթ միլիոն հինգ հարյուր ինը հազար) ՀՀ դրամ ընդհանուր հաշվեկշռային արժեքով:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է ընդունել «Գույքը սեփականության իրավունքով հանձնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**